

Ինչպես լինել սեփական վճարառուն – տեղեկագիր

Չրապ. #F132.10 Armenian, հոկտեմբեր, 2020թ.

Որոշ մարդիկ հիվանդության կամ հաշմանդամության պատճառով ի վիճակի չեն կառավարելու Սոցիալական ապահովության վարչությունից (SSA) ստացած դրամը: Այդ դեպքում SSA-ն որևէ բարեկամի, ընկերոջ կամ այլ անձի ընտրում է որպես ներկայացուցչական վճարառու: Նրանց նաև անվանում են «ռեփ. վճարառու»: Ավելի քան 8 միլիոն մարդ ռեփ. վճարառու ունի: Դուք կարող եք ունենալ ձեր ռեփ. վճարառուն: Եթե դուք արդեն ի վիճակի եք կառավարելու ձեր սեփական դրամը, ձեր ռեփ. վճարառուն պետք է հայտնի SSA-ին, որ դուք ռեփ. վճարառուի կարիք այլևս չունեք: Կարող եք SSA-ին նաև դիմել՝ ինքներդ ձեր վճարառուն լինելու համար:

Ինչպես դառնալ սեփական անձի վճարառուն

Եթե ցանկանում եք ինքներդ ձեր վճարառուն լինել, SSA-ը ձեզ հարցեր կտա, որպեսզի հավաստիանա, որ դուք պատրաստ եք դրան: Կախված ձեր տեղական SSA գրասենյակից՝ հարցերը կարող են տարբեր լինել: Նրանք կհարցնեն, թե արդյոք պատրաստ եք՝

- վճարել ձեր ամսական հաշիվները, օրինակ, տան վարձը, բժշկական, հեռախոսի և (կամ) համացանցային կապի ծախսերը,
- կառավարել ձեր սեփական բանկային հաշիվը կամ շահառուի/վարկային քարտը,
- բավարարել ձեր սեփական հիմնական կարիքները և
- ընկերներ ձեռք բերել կամ ընտանիք կազմել, որոնք գրավոր ձևով կօգնեն ձեզ ծախսեր կատարելու լավ սովորություններ զարգացնել:

Ի՞նչ է ձեզ անհրաժեշտ սեփական վճարառու դառնալու համար

Ֆիզիկական կամ հոգեկան հաշմանդամության պատճառով դուք հնարավոր է՝ ռեփ. վճարառու ունենաք: Ինքներդ ձեր վճարառուն դառնալու համար պետք է SSA-ին ցույց տաք, որ այժմ դուք ի վիճակի եք ծախսել սեփական դրամը:

Ահա ապացույցի մի քանի օրինակ, որոնք կնպաստեն ձեր դիմումին.

- a. Նամակ ձեր բժշկից, որում ասվում է, որ դուք կարողանում եք կառավարել ձեր սեփական դրամը,
- b. Դատարանի կողմից տրված փաստաթուղթ, որում ասվում է, որ դատարանը կարծում է, որ դուք կարողանում եք հոգալ ձեզ համար կամ
- c. Այլ ապացույց, որը ցույց է տալիս ձեր մասին ինքնուրույն հոգ տանելու ձեր կարողությունը.
 - a. Տեղեկանք ավտոհովի կամ թմրանյութերի չարաշահման համար ստացած բուժման մասին,
 - b. Հաշիվների վճարման ապացույց և
 - c. Աջակցության նամակներ ձեզ լավ ճանաչող մարդկանցից:

Նշում. SSA-ը հնարավոր է՝ համաձայնի, որ դուք ռեփ. վճարառուի կարիք այլևս չունեք: Այդ դեպքում նրանք նաև կստուգեն, թե արդյոք դեռևս համապատասխանում եք հաշմանդամության վճարներ ստանալուն:

Ինչպես սկսել գործընթացը

Արդյո՞ք զգում եք, որ պատրաստ եք ինքներդ ձեր վճարառուն լինել: Գործընթացն սկսելու համար կարող եք այցելել SSA-ի ձեր տեղական տարածքային գրասենյակը: Ձեր տարածքային գրասենյակը գտնելու համար զանգահարեք SSA-ի համապետական գրասենյակի 1-800-772-1213 հեռախոսահամարով: Կարող եք նաև այցելել [Սոցիալական ապահովության գրասենյակի տեղորոշման էջը](#)

Այս փաստաթղթի իրականացումը ֆինանսավորվում է Սոցիալական ապահովության դեպարտամենտի դրամաշնորհային համաձայնագրով՝ հարկատուների ծախսերով: Չնայած Սոցիալական ապահովության դեպարտամենտն ստուգել է այս փաստաթղթի ճշտությունը, այն սակայն չի համարվում Սոցիալական ապահովության դեպարտամենտի պաշտոնական տեղեկագիր: